ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի ֆինանսական վերահսկողության տեսչության կողմից ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչությունում (այսուհետ Վարչություն) 2011թ. հոկտեմբեր ամսին իրականացվել է 2008-2010 թթ. և 2011 թ. հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում բյուջեի եկամուտների ձևավորմանը և ծախսերի (ֆինանսական ծրագրեր, գնումների գործընթաց) իրականացմանն ուղղված գործունեության, հաշվապահական հաշվառման վարման և բյուջեի կատարման մասին հաշվետվությունների կազմման և ներկայացման՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխանության, արտաբյուջետային միջոցների գոյացման ու օգտագործման ճշտության ստուգում, ինչպես նաև ներքին աուդիտի ստորաբաժանման աշխատանքների գնահատում, որի արդյունքներով 2011թ. դեկտեմբերի 8-ին կազմվել է թիվ 84-Ա ակտը:

Ստուգումների արդյունքները հետևյալն են.

1. <<Գործադիր իշխանության պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում>> ծրագրով վարչության ծախսերի նախահաշիվներում գումարների նախատեսման ընթացքում բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման առանձին հոդվածների գծով հաշվի չի առնվել նախորդ տարիների փաստացի ծախսերի առավելագույն մակարդակը և 2011թ. ՀՀ պետական բյուջեով նախատեսվել է 7200.15 հազ. դրամ պահանջվածից ավել գումար:

2. Վարչության և <Ավիաուսումնական կենտրոն> ՓԲԸ-ի միջև կնքված պայմանագրով ՀՀ պետական բյուջեից <Ավիաուսումնական կենտրոն> ՓԲԸ-ն 2009թ. ֆինանսավորվել է 35 ուսանողների անվճար ուսուցման համար, սակայն 35 ուսանողներից 4-ը զորակոչվել են պարտադիր զինվորական ծառայության, որի արդյունքում ուսանողների միջին թվաքանակը կազմել է 33: Արդյունքում 4 ուսանողի հաշվով ՀՀ պետական բյուջեից ավել ֆինանսավորվել է 863,3 հազ. դրամ:

3. Վարչությունը չի ապահովել արտաբյուջետային եկամուտների պլանի կատարումը՝ եկամուտները պակաս են ստացվել 2008թ.-ին՝ 66.1 մլն դրամով կամ 28.2 տոկոսով, 2009թ.-ին՝ 67.4 մլն դրամով կամ 26.6 տոկոսով, 2010թ.-ին՝ 77.5 մլն դրամով կամ 23.4 տոկոսով: Վարչությանը հասանելիք շահութաբաժինների գումարները վճարելիս հաշվի չի առնվել շահութաբաժնի հաշվարկման համար հիմք հանդիսացող պակաս ցույց տրված զուտ շահույթի գումարները, որի հետևանքով չի ապահովվել 2007թ. և 2008թ. արդյունքներով լրացուցիչ վճարման ենթակա շահութաբաժնի գումարների գանձումը՝ համապատասխանաբար 9925,8 հազ. դրամի ու 126,7 հազ. դրամի չափով. արդյունքում արտաբյուջետային միջոցների հաշվին պակաս եկամուտներ են մուտքագրվել 10052,5 հազ. դրամի չափով:

4. Արտաբյուջետային միջոցների հաշվին կատարված ծախսերի ստուգմամբ պարզվել է.
- <Այլ նպաստներ բյուջեից> հոդվածով գումարները նախատեսվել են առանց այդ հոդվածով իրականացվող ծախսերի իրական պահանջը հաշվի առնելու և 2008-2011թթ. այս հոդվածով նախատեսված 112626,7 հազ. դրամի դիմաց ընդամենը կատարվել է 19136,0 հազ. դրամի փաստացի ծախս, նշված տարիներին արտաբյուջետային միջոցների տարեվերջին մշտապես առկա են եղել դրամական միջոցների էական մնացորդներ:

- <Գործուղումների և շրջագայությունների ծախսեր> հոդվածով ծախսերը հաշվարկելիս և վճարելիս վարչությունում չեն առաջնորդվել ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2335-Ն որոշման պահանջներով, որի արդյունքում ավել է հաշվարկվել և վճարվել 574,6 հազ. դրամ:

Ստուգման արդյունքում արձանագրված գումարները վերականգնվել են, բացթողումներն ու թերությունները շտկվել:

ՀՀ ֆինանսների նախարարության հասարակայնության և տեղեկատվության հետ կապերի բաժին